ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտահետազոտական պլանների մեջ իր կարևոր բաժինը ունի Հայրենական պատերազմի պատմության կաբինետը։ Կաբինետի առջև դրված է մի կարևոր պրոբլեմ՝ հետազոտել Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերող նյութերը, դրանք հավաքել կաբինետի արխիվում, մշակել և հրատարակության պատրաստել առանձին աշխատություններ։

Այս ուղղությամբ արդեն կատարված է զգալի աշխատանք։

Կաբինետը վերջին երկու տարվա ընթացքում (1950—51 թթ.) հավաքել է բազմաթիվ կարևոր և արժեքավոր փաստաթղթեր, որոնք լուսաբանում են հայ ժողովրդի հերոս զավակների անձնուրաց սխրագործությունները Հայրենական պատերազմի տարիներին, թե ռազմաճակատում և թե թիկունքում։

1950—51 թթ. ընթացքում կաբինետը կազմակերպել է 8 գործուղում (Լենինական, Ստեփանավան, Կոտայք, Հոկտեմբերյան, Կիրովական, Ղափան, Սևան, Թբիլիսի, Բաքու, Շամխոր, Զարգալու), որի ընթացքում ձեռք են բերված մոտ 2325 փաստաթուղթ, ավելի քան 500 լուսանկար, 3 նեգատիվ, ձայնագրված ելույթներ և այլն։

Ձեռք բերված նյութերից հիշատակության արժանի են՝ Սովետական Միության Կրկնակի Հերոս Ն. Ստեփանյանի անձնական նամակները և Կոմերիտմիության տոմսը, ՍՍՌ Միության Զինված ուժերի մինիստր, Սովետական Միության մարշալ Վասիլևսկու հրամանը Սովետական Միության Հերոս, ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին Ջ հրաձգային գնդի ցուցակում առհավետ գրանցելու մասին, Սովետական Միության Հերոս Գ. Միքայելյանի կատարած սխրագործությունների վերաբերյալ 30 նոր փաստաթղթեր, Կրասնադոնի «Երիտասարդ գվարդիա» կոմերիտական ընդհատակյա կազմակերպության ակտիվ մասնակից Ժորա Հարությունյանցի ճառի սղագրությունը՝ Երևանի ԼԿԵՄ համաքաղաքային ակտիվի նիստում և ֆաշիստների կողմից գազանաբար գնդակահարված, նույն գվարդիայի ակտիվ մասնակից Մայա Փեհլեվանովայի մոր հուշերը. Լենինգրադի և Ստալինգրադի մարտերին մասնակից «KB» ծանր տանկի հրամանատար Կուրոյանին, Սևաստոպոլում հերոսի մահով զոհված դիվիզիայի հրամանատար, գնդապետ Մեհրաբյանին, դեներալ մայոր Ի. Կնունյանցին, Սովետական Միության հերոսներ փոխգնդապետ Թ. Եղիազարյանին, Ս. Առաքելյանին, Մ. Հարությունյանին, Գ. Ավագյանին, Գ. Վարդումյանին, Ա. Մուստաֆաևին, Ի. Շահումյանին, Ա. Սաֆարյանին, Ռ. Բագիրովին, Ա. Ամատունուն վերաբերվող արժեքավոր և հետաքրքիր փաստաթղթեր։

Արժեքավոր նյութերից են Իրեստի ամրոցի հերոսական պաշտպանությանը վերաբերող նյութերը։

Թիկունքին վերաբերող ֆոնդերը ևս հարստացվել են նոր փաստաթղթերով, որոնք վերաբերում են ռեսպուբլիկայի բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի հերոսական աշխատանքին, Հայաստանի պարտիական կազմակերպությունների աշխատանքին։

Ձեռք բերված կարևոր փաստաթղթերից են Սոցիալիստական Աշխատանքի Հերոս մեքենավար Ա. Խաչատրյանին, Լենինի շքանշանակիր, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ, մեքենավար Գ. Արաջյանին, շքանշանակիր կին մեքենավար Մ. Արալովային, Արաբկիր ավանի ավանային սովետի նախագահ Վ. Գալստյանին վերաբերող փաստաթղթերը։

Հետաքրքիր փաստաթուղթ է Հայրենական պատերազմի տարիներին Սովետական Միության տարբեր քաղաքներից էվակուացիայի ենթարկված և Արաբկիր ավանում տեղավորված՝ զինծառայողների կանանց շնորհակալագիրը՝ ուղղված ավանային սովետին, որտեղ սրտառուչ տողերով գրում են իրենց ցույց տրված ջերմ հայրենասիրական հոգատարության և օգնության համար։

„Мы, эвакуированные женщины, проживающие в Арабкире, единогласно и с большим воодушевлением сочли своим приятным долгом и обязанностью вынести

резолюцию с выражением нашей горячей благодарности и глубокой признательности председательнице Арабкирского поселкового совета.

Считаем нужным отметить исключительное внимание по отношению ко всем эвакуированным со стороны ЦК КП(б)А, правительства Армянской ССР и районных партийных организаций за проведенные мероприятия по улучшению культурно-бытовых условий всего эвакуированного населения". Այժմ էլ նրանք ունեն նամակագրական կապեր Երևան քաղաքի Միկոյանի ռայոնի ռայսովետի հետ։

Բացի սրանցից, ձեռք են բերված բազմաթիվ փաստաթղթերից բաղկացած արխիվներ, օրինակ՝ «Լենինականի աշխատավորությունը Հայրենական պատերազմի տարիներին», «Զարդախլուի կոլխոզը Հայրենական պատերազմի տարիներին»։

Նոր նյութերով բավական հարստացված են նաև Հայրենական պատերազմի տարիներին հայ կանանց կատարած աշխատանքին վերաբերող ֆոնդերը։ 1950—1951 թթ. ձեռք բերված նյութերի հիման վրա կազմված են բազմաթիվ նոր գործեր, արխիվային կանոնների համաձայն կանոնավորված են արխիվային ֆոնդերը։

Կաբինետի գրադարանը և պարբերական մամուլի բաժինը 2 տարվա ընթացքում համալրվել է 100 կտոր մասնագիտական գրականությամբ և 17 անուն նոր թերթերով, որոնցից են «Պրավդա» և «Կոմունիստ» (1941—45 թթ.), «Սովետական Վրաստան», «Բանվոր», «Սովետական Ղարաբաղ», «Բոլշևիկյան հաղթանակ», «Կոլխոզնիկ» և «Սոցիալիզմի ուղիով» թերթերի 1941—1945 թթ. լրիվ կոմպլեկտները։

Կաբինետի աշխատակիցները կազմել են «Հայ ժողովրդի մասնակցությունը Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմին (1941—1945 թթ.)» և «Կովկասի պաշտպանությանը հայ ժողովրդի մասնակցությունը» փաստաթղթերի ժողովածուները։

Կաբինետի արխիվային փաստաթղթերի հիման վրա պատմ. գիտ. թեկնածու Ե. Խալեյանը գրել և 1950 թ. հրատարակել է «Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյան» գիտա-պոպուլյար աշխատությունը։

1950 թ. հրատարակվել է փոխգնդապետ Ս. Թովմասյանի «Մի էջ Կովկասի պաշտպանությունից» (քաղ. աշխատողի գրանցումները) աշխատությունը։

Կաբինետի կրտսեր գիտ. աշխատակից Կ. Կոզմոյանը աշխատում է «Լենինականի աշխատավորությունը Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի տարիներին» թեմայի վրա։

Կաբինետը կապեր է հաստատել Լենինգրադի պաշտպանության, Ստալինգրադի պաշտպանության և Մինսկի Հայրանական պատերազմի թանգարանների հետ, որտեղից ստանում է հայ մարտիկներին վերաբերող նյութեր և փոխադարձաբար ուղարկվում է համապատասխան նյութեր։

Կաբինետի արխիվային փաստաթղթերի հիման վրա գրվել են դոկտորական, թեկնածուական դիսերտացիաներ և դիպլոմային աշխատանքներ։

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ